ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-ԻՑ ՄԻՆՉԵՎ 9-Ը

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանուն.

Կարեն Սարգսյան, Սևակ Խլղաթյան, Մանանա Գալստյան, Երեմ Քարամյան

2. Զբաղեցրաց պաշտոնը.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, մարզպետի խորհրդական և մարզպետի օգնականներ:

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ֆրանսիայի Հանրապետություն՝ 2024 թվականի նոյեմբերի 5-ից 9-ը:

4. Հրավիրող կողմը.

Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտ:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Հրավեր՝ մասնակցելու Իզերում Հայաստանի ամսվա մեկնարկին, որը տեղի էր ունենում երրորդ անգամ, ինչպես նաև Իզերի դեպարտամենտի և Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի միջև համագործակցության 20-ամյակին նվիրված միջոցառմանը և ամփոփելու այն ծրագրերը, որոնք իրականացվում են ՀՀ Գեղարքարունիքի մարզպետի աշխատակազմի և Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտի միջև ստորագրված ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում:

6. Քննարկված թեմաները.

Առողջապահություն, գյուղատնտեսություն, զբոսաշրջություն, ֆրանկոֆոնիա, մշակույթ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

05 նոյեմբերի 2024թ.

Հանդիպում ԱՄԴ-ի ներկայացուցիչների հետ (առողջապահության առանցք), քննարկվել են համագործակցության շրջանակներում Վ. Գետաշենի բուժամբուլատորիայի վերանորոգման հետ կապված հարցեր, ինչպես նաև 2025 թվականին նախատեսվող աշխատանքներ:

Հանդիպում Մագալի Լոնգուրի հետ՝ Իզերի դեպարտամենտի մշակույթի, ժառանգության և ապակենտրոնացված համագործակցության հարցերով բաժնի տնօրենի տեղակալ:

06 նոյեմբերի 2024թ.
IRAPA հարթակի պիլոտային կոմիտեի ժողով Վիենի քաղաքապետարանի պսակադրությունների սրահում, որի ընթացքում մարզպետը հանդես է եկել ելույթով՝ ամփոփելով համագործակցության շրջանակներում մինչ օրս իրականացված աշխատանքները:

Պատվիրակության ընդունելություն Իզերի դեպարտամենտի նախագահ Ժան Պիեռ Բարբիեի և Պատրիկ Կուրտոի՝ Իզերի դեպարտամենտի մշակույթի, ժառանգության, միջազգային համագործակցության հարցերով փոխնախագահի կողմից՝ այցելություն Հեկտոր Բերլիոզ թանգարան:

07 նոյեմբերի 2024թ.
Ընդունելություն ԱՖՐԱՏ-ում (զբոսաշրջության առանցք):
ԱՖՐԱՏ-ը ֆրանսիական ասոցիացիա է, որն աջակցում է նրանց, ովքեր ցանկանում են ապրել, աշխատել գյուղական և լեռնային շրջաններում: Ընկերությունն աջակցում է անհատներին՝ հմտությունների և համայնքներին՝ նախագծերի զարգացման հարցում: Դասընթացները հիմնականում վերաբերում են խոհարարությանը, տեղական արտադրանքի առաջմղմանը, լեռնային զբոսաշրջային մասնագիտություններին, ինչպես նաև տեղական զարգացման և ձեռներեցության ոլորտներին:
Ավելի քան 15 տարի AFRAT-ը հանդես է գալիս որպես ֆրանսիական և հայկական համայնքների համագործակցության հարթակի տեխնիկական օպերատոր:

Իզերի Գյուղատնտեսական պալատի՝ Գեղարքունիքի մարզ կատարած այցի ամփոփում՝ մասնակցությամբ գյուղատնտեսական հարցերով փոխնախագահի և գյուղատնտեսական պալատի ներկայացուցիչների:

Մասնակցություն Հայաստանին վերաբերող ցուցահանդեսի բացմանը:

08 նոյեմբեր 2024թ.
Իզերի դեպարտամենտի նախագահի հետ պատվիրակության այցելություն Ժակլին Ռեբուֆե-Լավալի գյուղատնտեսական արտադրություն:

Մասնակցություն Միսաք և Մելինե Մանուշյաններ որմնանկարի բացման արարողությանը՝ Իզերի Դիմադրության և աքսորի թանգարանում, որտեղ մարզպետը հանդես է եկել ելույթով:

Մասնակցություն Դոֆինեի թանգարանի մատուռում Հայաստանի ամսվա բացումն ազդարարող միջոցառմանը, որտեղ ևս Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը հանդես է եկել ելույթով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ԱՄԴ-ի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել Վ. Գետաշենի բուժամբուլատորիան վերանորոգել բացառապես Ֆրանսիական կողմի միջոցներով (շուրջ 21 մլն. ՀՀ դրամ):
Սույն թվականի նոյեմբերի 16-ից 21-ը ԱՄԴ-ի ներկայացուցիչները կլինեն Գեղարքունիքի մարզում: Այցի ընթացքում մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման ներկայացուցիչները նրանց կուղեկցեն համագործակցության շրջանակներում արդեն իսկ վերանորոգված և վերազինված Գանձակի, Ծովինարի և Կարմիրգյուղի բուժամբուլատորիաներ, որից հետո մարզպետի հետ կքննարկվի 2025թ.վերանորոգվող և վերազինվող բուժամբուլատորիաների ցանկը:

Ստորագրված փաստաթղթեր առկա չեն:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Մարզպետի կողմից ԱՄԴ-ի ներկայացուցիչներին առաջարկ է արվել առողջության առաջնային օղակի միավորման և դրա կառավարման մոդելի Գրենոբլի համալսարանական հիվանդանոցի փորձը տեղայնացնել Գեղարքունիքի մարզում:

Իզերի Գյուղատնտեսական պալատի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ մարզպետն առաջարկել է առաջիկայում ստեղծել տեխնիկական կոմիտե, որում ներգրավված կլինեն Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի և Գյուղատնտեսական պալատի համապատասխան մասնագետները՝ հետագա ծրագրերը համատեղ կառուցելու և վերահսկելու համար:

Ստորագրությունը, ամսաթիվը.

Recoverable Signature

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN KAREN 3710840503

13.11.2024 р